«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

«NEW GENERATION» HUMANITARIAN NGO

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

 # 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2016

Սույն ամսագիրը լույս է տեսնում յուրաքանչյուր ամիս, որն արտացոլում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

Հայաստան 0019, ք.Երևան, Բաղրամյան 49, բն. 7
Apt.7, 49 Baghramyan str. Yerevan 0019, Armenia

+374 60 378989
+374 60 478989

newgenerationngngo@gmail.com
http://ngngo.net/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

▪ «Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագրի 3-րդ հանդիպում	3
▪ Աջակցություն տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականության նվազեցմանը. Նոր ենթադրամաշնորհային ծրագիր	3-4
▪ Հավասարությունը բոլորինս է. Նոր ենթադրամաշնորհային ծրագիր	5
▪ «Իրազեկում հանուն հավասարության եվ ներառման» ծրագիր. Նոր ենթադրամաշնորհային ծրագիր	5-6
▪ «Իրական կյանքը ստվերում»	5-6
▪ Մեր հաջողությունը կազմակերպության հետեվողական աշխատանքի շնորհիվ է. Արտյոմ Մովսեսյան	6-7
▪ Բաղրամյան. Անհայտ երիտասարդի օրագրից 1.0	7-8
▪ Հանդուրժողականություն բառը պետք չի գործածել. Արթուր Մակարյան	8
▪ ՄԻԱՎ-ի դեմ պայքարելը մեր բոլորի պարտքն է. Լեւոն Չիլինգարյան	9
▪ Բարեգործության շարժառիթները բխում են մարդու բնույթից. «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ	10
▪ ՍԵՄԻՆԱՐ-ՎԱՐԺԱՆՔՆԵՐ Վանաձորում,Գյումրիում, եվ Երեւանում	10-12
▪ Հանուն հավասար իրավունքների. Սեմինար-դասընթաց	12-13
▪ Խոշտանգումների կանխարգելումը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում. Երկխոսություն ՔԿՀ աշխատակիցների եվ իրավապաշտպանների միջեվ	13-14
▪ ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների կարիքների գնահատում	14
▪ «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն դարձել է ԻԼԳԱ ԵՎՐՈՊԱ ցանցի անդամ	15
▪ ԼԳԲՏԻ հիմնահարցերը շարունակում են մնալ արդիական. Հանդիպում Ալբերտա համալսարանի քաղաքագիտության ամբիոնի դասախոս Սեվան Բեուկյանի հետ	15
▪ ԼԳԲՏ միջազգային կոնֆերանսին ներկայացվել է Հայաստանում տիրող իրավիճակը	16

«ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ, ԵԹԵ ԿԱ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ» ԾՐԱԳՐԻ 3-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-երը 2 ամիս է իրականացնում են «Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագրը: Արդեն տեղի է ունեցել 3 տարբեր խմբերից կազմված հանդիպումներ, որոնց շրջանակներում խմբերի հիմնական ուշադրության կենտրոնում են եղել ՏՍՏ-ներին և տրանսգենդեր անձանց հասանելի ապրանքներն ու ծառայությունների տրամադրումը, դրանցից օգտվելու առավելություններն ու խոչնդոտները:
Հանդիպման 3-րդ օրը մասնակիցները համապատասխան աղյուսակում նշումների միջոցով առանձնացրեցին բոլոր այն առավելություններն ու թերությունները, որոնք հանդիպում են հետազոտությունների, ծառայությունների ու ապրանքներից օգտվելու ժամանակ:
3-րդ հանդիպման ժամանակ մասնակիցները առանձնացրեցին նախորդ 2 հանդիպումների ժամանակ առաջնային համարվող ապրանքներից կարևորագույնները:
Հանդիպումների ժամանակ տարբեր խմբերից կազմած մասնակիցները կատարել են թիրախային համայնքների կարիքների գնահատում, շահերի պաշտպանության միջոցառումներ՝ ուղղված թիրախային խմբերի ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության դյուրացմանը:
“Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե” ծրագիրը, իրականացվում է Վնասի Նվազեցման Եվրասիական Ցանցի, Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցի Ֆինանսավորմամբ:
Հիշեցնենք, որ ծրագրի թիրախային խմբեր են հանդիսանում տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ և տրանսգենդեր անձիք: Ծրագրի շրջանակներում իրականացվելու են թիրախային համայնքների կարիքների գնահատում և շահերի պաշտպանության միջոցառումներ՝ ուղղված թիրախային խմբերի՝ ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության դյուրացմանը:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ. ՆՈՐ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը արդեն մի քանի տարի է, ինչ իրականացնում է ենթադրամաշնորհային ծրագրեր: Կազմակերպությունը այսկերպ ցանկանում է նպաստել տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականության նվազեցմանը կազմակերպության անհատների և կամավորների ներուժի հզորացման և շահերի պաշտպանության միջոցով: Այս անգամ ենթադրամաշնորհը հատկացվել է «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ին:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհառու կազմակերպությունը նախատեսում է.

- Կազմակերպել 2-օրյա սեմինար-դասընթաց կազմակերպության թվով 10 ներկայացուցիչների համար

խտրականության և ռազմավարության մշակման վերաբերյալ,

- Մշակել հակախտրականության ռազմավարության մեջ արտացոլվելիք տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականության նվազեցման ռազմավարական գործողությունների ցանկը,
- Պատրաստել և հրապարակել մեկ տեսահոլովակ տրանսգենդեր անձանց նկատմամբ գոյություն ունեցող խտրականության և պայքարի ուղիների վերաբերյալ, որպես շահերի պաշտպանության գործիք:
- «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ն որպես թիրախ ընտրել է կազմակերպության աշխատողներին, կամավորներին ու կազմակերպության ծառայություններից օգտվող անձանց, ինչպես նաև հասարակությանը:
- Ծրագրի ավարտից հետո ՀԿ-ն ցանկանում է բարձրացել կազմակերպության ներկայացուցիչների գիտելիքների մակարդակը խտրականության և ռազմավարության մշակման վերաբերյալ, մշակվել հակախտրականության ռազմավարության մեջ արտացոլվելիք տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականության նվազեցման ռազմավարական գործողությունների ցանկը, ինչպես նաև պատրաստել և հրապարակել մեկ տեսահոլովակ տրանսգենդեր անձանց նկատմամբ գոյություն ունեցող խտրականության և պայքարի ուղիների վերաբերյալ՝ որպես շահերի պաշտպանության գործիք:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐԻՆՍ Է. ՆՈՐ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրամադրվող ենթադրամաշնորհային ծրագիրը կիրականացվի Վանաձորում: «Հավասարությունը բոլորինս է». հենց այս ենթադրամաշնորհը նպատակ ունի բարձրացնել Վանաձոր քաղաքի բնակչության իրազեկվածության մակարդակը խտրականության բացասական հետևանքների և հավասարության գաղափարախոսության կարևորության վերաբերյալ:

Փոքր ենթադրամաշնորհային ծրագրով նախատեսվում է խտրականության բացասական հետևանքների կանխարգելման վերաբերյալ տպագրել և տարածել թվով 50 տեղեկատվական թերթիկներ, տարածել հավասարության գաղափարի գիտակցման կարևորության վերաբերյալ տեղեկատվություն՝ երաժշտական հոլովակի նկարահանման, թվով 1 կլոր-սեղան քննարկումների միջոցով:

Ծրագրիրն իրականացնող «Հավասարար իրավունքներ հավասար հնարավորություններ» ՀԿ-ն ցանկանում է երաժշտական հոլովակը ներկայացնել ծրագրի շրջանակներում կազմակերպվող կլոր-սեղան քննարկումներին, ինչպես նաև համացանցում՝ նպատակ ունենալով ձևավորել հանրության լայն շերտ, որը կգիտակցի հավասարության գաղափարախոսության կարևորությունը:

«NEW GENERATION» Humanitarian Non-Governmental Organization
«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

«ԻՐԱԶԵԿՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԱՌՄԱՆ» ԾՐԱԳԻՐ. ՆՈՐ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանում ապրում է հաշմանդամություն ունեցող ավելի քան 200,000 անձ, որոնց մեծամասնությունը համատարած կարծրատիպային վերաբերմունքի, խարանի, ֆիզիկական և տեղեկատվական անմատչելիության, ոչ-ներառական մոտեցումների և այլ պատճառներով հնարավորություն չունեն իրացնել իրենց իրավունքները և լիակատար մասնակցություն ունենալ հասարակական կյանքում:

Հենց այս երևույթները վերացնելու համար էլ «Հասարակություն առանց խտրականության» նախաձեռնող խումբը ստացել է ենթադրամաշնորհ, որի շրջանակներում նպատակ է հետապնդում նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց դեմ խտրականության վերացմանը՝ նրանց ծնողների և ընտանիքի անդամների իրազեկման միջոցով:

«Իրազեկում հանուն հավասարության և ներառման» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել խտրականության վերաբերյալ դասընթաց հաշմանդամություն ունեցող անձանց ծնողների և ընտանիքի անդամների համար, մշակել, տպագրել և բաժանել հաշմանդամության հիմքով խտրականության վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ հատուկ հաշմանդամություն ունեցող անձանց ծնողների և ընտանիքի անդամների համար, կազմակերպել և վարել հաշմանդամության հիմքով խտրականության վերաբերյալ 4 դասընթաց Կոտայքի, Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերում և անցկացնել օնլայն ֆոտո-արշավ «Ծնողները խտրականության դեմ» խորագրով՝ դասընթացների մասնակիցների ներգրավմամբ:

Ենթադրամաշնորհային ծրագրի նպատակն է զարգացնել թիրախային խմբերի կարողությունները և նրանց միջոցով բարձրացնել հասարակության իմացության մակարդակը խտրականության, վերջինիս դեմ պայքարի կարևորության ու հետևանքների մասին:

«Իրազեկում հանուն հավասարության և ներառման» ծրագիրն իրականացվում է «Առավել շատ տեղեկատվություն, առավել քիչ խտրականություն. ՔՀԿ-ների և խոցելի խմբերի կարողությունների զարգացում և հզորացում» ծրագրի շրջանակներում, Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

«ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՏՎԵՐՈՒՄ»

Մեր առաջին զրուցակիցը տրանսգենդեր անձ է, ով կոմերցիոն սեռական ծառայություն է տրամադրում տղամարդկանց: Նա չցանկացավ հրապարակել իր անունը: «Կոմերցիոն սեռական ծառայություն մատուցում եմ արդեն 4 տարի, նման աշխատանքով

զբաղվելը ինձ համար ֆինանսական կայունություն ձեռքերելու միջոց է: Աշխատանքիս պատճառով ընտանեկան որևէ խնդիր չեմ ունեցել, ընտանեկան սոցիալական վատ պայմաններից ելնելով չեմ զբաղվել այս աշխատանքով:

Ինքնահաստատվելու ամենահեշտ ու ամենադյուրին տարբերակը սա էր, որը ես ընտրել եմ բացառապես իմ կամքով՝ անտեղյակ լինելով ամեն ինչից, չճանաչելով ոչ մեկին: Սա այն աշխատանքն էր, որով շատերը կարողանում են լուծել մի շարք խնդիրներ, որը յուրաքանչյուրի մոտ տարբեր է, անձամբ ես սեքս աշխատանքին վերաբերվում եմ որպես ուղղակի աշխատանքի:

Սկզբում ամեն ինչ բնականաբար բարդ էր, ինչպես ցանկացած աշխատանքում, բարդ էր լինում շփումը մարդկանց հետ, երևի դա գալիս է սկզբնական շրջանում քո ներքին անհարմարավետության զգացումից, կապված աշխատանքի առանձնահատկություններից ու ավելի տարբերվող շփման սահմաններից: Ինձ համար այս ամենը անցյալում է:

Գիտեք, երբ դուք անփորձ եք ու աշխատանքից ելնելով վստահում եք բոլորին ու նստում տարբեր մարդկանց մեքենաներ, դա արդեն իրենից որոշակի ռիսկ է ենթադրում: Կցանկանամ առանձնակի շեշտել այն հանգամանքը, որ մեր հաճախորդները դրանք ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները չեն, դրանք ունենում էին անվստահության զգացողություն, այն տղամարդիկ են, ովքեր սիրում են կանանց, ովքեր ունեն այնպիսի սեքսուալ պատկերացումներ, որ կարող են իրականացնել միայն սեքս աշխատող անձնաց հետ:

Կոմերցիոն սեռական ծառայություն մատուցելը ահավոր բարդ է, երբ դու սկսում էս ամեն օր մի քանի տղամարդու հետ սեռական հարաբերություն ունենաս ու դրա հետ միաժամանակ դու ունես քո անձնական կյանքը, այդ ժամանակ ամեն ինչ շատ ավելի է բարդանում: Ինձ մոտ ավելի շատ զարգացած է զգացմունքայնությունս, երբեմն սիրահարվում եմ, երբեմն ատում, երբեմն էլ ուղակի ադեկվատ մտածելակերպով անում եմ իմ աշխատանքը»:

Մեր հարցին, թե կա կարծրատիպ, որ տրանգենդեր անձիք այն մարդիկ են, ովքեր անտեսում են կրթությունը, մեր զրուցակիցը տեղեկացրեց. «Ես ինքս ցանկանում եմ շարունակեմ կրթությունս, հասնել մասնագիտական հաջողությունների, որը ամբողջովին տարբերվում է սեքս աշխատանքից»:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի պաշտոնական կայքում այսուհետև կարող եք ընթերցել ոչ միայն մեր կազմակերպության գործունեության մասին նյութեր ու ծառայություններից օգտվող անձանց պատմությունները, այլև ԼԳԲՏԻ համայնքի խնդիրներին առընչվող մի շարք մարդկային անհատական պատմություններ:

ՄԵՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՆՈՐՀԻՎ Է. ԱՐՏՅՈՄ ՄԱՎՍԵՍՅԱՆ

«Մենք ամեն ինչ անում ենք, որպեսզի տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ լինեն տեղեկացված և առողջ»,- վստահեցնում է «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում» ծրագրի համակարգող Արտյոմ Մավսեսյանը՝նշելով, որ ծրագրի մասին ավելի շատ մարդ է իմանում հենց վերջին մի քանի ամիսների ընթացքում, այդ հանգամանքը բացատրելով ծրագրի աութրիչ աշխատակիցների ակտիվությամբ:

«Սկզբնական շրջանում շահառուները որոշ ժամանակ անց, երբ նրանք արդեն

հանդիպում են աութրիչ աշխատակիցներին, ամեն ինչ փոխվում է, ինչը, կարող եմ միանշանակորեն ասել, որ կազմակերպության հետևողական աշխատանքի շնորհիվ է»,- տեղեկացրեց ծրագրի համակարգողը՝ հավելելով, որ աշխատակիցների տեղեկատվության մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպությունը պարբերաբար իրականացնում է հաղորդակցության, մարդու իրավունքների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ սեմինարներ:
«Բացի այն, որ մենք հետևողական ենք մեր աշխատակիցների նկատմամբ, մենք նաև ամեն ինչ անում ենք, որպեսզի մեր շահառուները բացի ծրագրի կողմից տրամադրվող ծառայություններից նաև մասնակցեն մեր կողմից կազմակերպվող սեմինարներին: Դրա վառ օրինակն են առաջիկայում կազմակերպվելիք սեմինարները: Մենք արդեն վաղը Գյումրիի և Վանաձորի մեր շահառուների համար կազմակերպելու ենք «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը» և «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» թեմաներով մեկօրյա սեմինար»,- տեղեկացրեց Արտյոմ Մովսեսյանը:
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, լինելով միակ կազմակերպությունը, որը Հանրապետությունում իրականացնում է ՏՍՏ-ների (տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ) շրջանում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ու տեղեկացվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագիր, փաստում է, որ կազմակերպությունը մտահոգված է ՏՍՏ-ների կյանքի, կրթության և տեղեկատվության բարձրացման խնդիրներով:
Հիշեցնենք, որ 2016 թ-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացնում է «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում», որը ֆինանսավորում է «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղը ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերի միջոցով: Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման Ազգային Ծրագրի իրականացմանը ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի դեպքերի նվազեցման և տեղեկացվածության մակարդակի բարձրացման միջոցով:

ԲԱՂՐԱՄՅԱՆ. ԱՆՀԱՅՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՕՐԱԳՐԻՑ 1.0

…Ցույցերին չմասնակցածներին, այնուամենայնիվ, տարան հոգեբուժարան: Չդիմացան աղմուկի ճնշմանը: Ինձ էլ պիտի տանեին, բայց վերջին պահին վերջին ուժերս հավաքեցի ու «համակարգի ներսում» եղա. Խոստովանում եմ, լավ դերասան եմ: Ես չգնացի գժանոց, գժանոցը մտավ իմ մեջ: Հեռուստացույց, մամուլ, ինտերներ, պատուհաններ, մարդիկ, անգամ տան պատերը կարծես աղմկեին երիտասարդների ձայներով, որ արդեն խզվել էր օր ու գիշեր գոռալուց: Ընկերներս այնտեղ չէին, ես չունեմ ընկերներ, մինչդեռ հանդիպող մարդիկ էլ՝ հիմնականում թոշակառու մարդիկ (ում տարիքն ու փողոցում կատարվածը խիստ հակադրական էր ու էլ ավելի էր ընդգծում տարեցների տանջանքը, (նաեւ իմ)), կարծես միտումնավոր կրկնեին անընդհատ՝ կործանվում ենք, վերջ, վերջ, վերջ…
Նման մի բան հերթական անգամ լսեցի մի տարեց մարդուց, հրաժեշտ տվեցի ու շարունակեցի ճանապարհս: Թիկունքումս բարձրացող աղմուկ: Չեմ շրջվում – արդեն գիտեմ ինչ է սպասում: Մաշտոցի պողոտայի հակառակ ծայրից վրա է հասնում Ալտերնատիվ ռասան – ողջ կազմով, ձեռքերին եռագույններ, բարձրախոսներ, գալիս են ինձ հեռացնելու երկրի վրայից, գալիս են հաշիվները մաքրելու իմ հետ, որովհետև ես լռել եմ, չեմ միացել նրանց, չեմ պայքարել Ազատության համար, (ես գիտեի, որ ինչ-որ բանով տարբերվում էի շրջապատից, բայց էսօր իմացա – լավ բանով չեմ տարբերվում), օտար մարմին՝ Կատարյալների մեջ:Կիսաբաց

աչքերով ասֆալտին փռված նայում եմ տեսարանը, ստորացման ալիքը գնալով ավելի ու ավելի խորն էր գնում, խորը դեպի ներս… մթության մեջ մուգ կապույտ ստորացման ճառագայթ… : Ոստիկաններին հաջողվեց ցրել հավաքը, մինչդեռ դրա շունչն իմ շնչին էր հասել…

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի պաշտոնական կայքում այսուհետև կարող եք ընթերցել ոչ միայն մեր կազմակերպության գործունեության մասին նյութեր ու ծառայություններից օգտվող անձանց պատմությունները, այլև ԼԳԲՏԻ համայնքի խնդիրներին առընչվող մի շարք մարդկային անհատական պատմություններ և այլ այլընտրանքային նյութեր:

Լուսանկարը՝ համացանցից:

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԸ ՊԵՏՔ ՉԷ ԳՈՐԾԱԾԵԼ. ԱՐԹՈՒՐ ՄԱԿԱՐՅԱՆ



Սեպտեմբերի 22-ից 25-ը Երևանում անցկացվում է Երիտասարդական Սոցիալական Ֆորում, որը նմանատիպ միակ միջոցառումն է ողջ տարածաշրջանում: Ֆորումն ունի հստակ սկզբունքներ, այն բաց է նրանց համար, որոնք խրախուսում են բազմակարծությունը եւ ազատ խոսքը:

ԵՍՖ-ը 4-օրյա ծրագիր է, որն իրականացվում է Հայաստանում արդեն չորրորդ տարին և որի ընթացքում երիտասարդները հնարավորություն ունեն իրազեկվել, քննարկել սոցիալական նշանակության տարբեր հարցեր, հղկել գիտելիքները, հաստատել նոր կապեր եւ ստեղծել համագործակցային հնարավորություններ:

Քննարկում-աշխատաժողովի նպատակն է հանդուրժողականության՝ որպես արժեքի դիտարկումը, այլատյացության հիմքերի, պատճառների, դրսևորում ների և հետևանքների բացահայտումը: Աշխատաժողովի ժամանակ քննարկվեցին ու պարզաբանվեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք են հանդուրժողականությունը, այլատյացության հիմքերը և դրսևորումները, բազմազանությունն ընդդեմ խտրականության և այլատյացության հետևանքներ ը հասարակության վրա:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իր գործունեությամբ ապացուցել է, որ սատարում է և խթանում մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների, սոցիալական արդարության և համերաշխության արժեքների ու սկզբունքների կայացմանը:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Արթուր Մակարյանը ֆորումի մասնակիցներին ներկայացրեց խտրականությունը՝ կախված ռասայից, ազգությունից, կրոնից, սեռից, քաղաքական կամ այլ հայացքներից, անձնական, սոցիալական բնույթի հանգամանքներից:

Խոսնակը ֆորումի մասնակիցներին ներկայացրեց նաև սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի որոշ դրույթներ, ռասայական խտրականության բոլոր տեսակների վերացման դեմ կոնվենցիայի 12-րդ արձանագրությունը, ինպես նաև ներպետական օրենսդրությամբ սահմանված այն իրավական ակտերը, որոնք սահմանում են խտրականությունից զերծ մնալու իրավական բնորոշում:

Արթուր Մակարտյանը «Հանդուրժել կարելի՞ է, թե՞ պետք է» հարցին պատասխանեց. «Հանդուրժողականություն բառը պետք չէ գործածել, յուրաքանչյուրը պետք է իր դիմացինի հանդեպ լինի մարդասեր, ինչպես նշված է մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածում»:

«NEW GENERATION» Humanitarian Non-Governmental Organization
«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

ՄԻԱՎ-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼԸ ՄԵՐ ԲՈԼՈՐԻ ՊԱՐՏՔՆ Է. ԼԵՒՈՆ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Այլընտրանքային բաժնում այս անգամ առաջարկում ենք ընթերցել «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի աուրիչ աշխատակցի՝ Լևոն Չիլինգարյանի պատմությունը, նրա պայքարը հանուն մարդկության և նպատակասլացությունը հանուն արդարության: «ՄԻԱՎ-ի մասին առաջին անգամ լսել եմ ծնողներիցս, երբ հեռուստատեսությամբ ներկայացնում էին հերթական վիճակագրությունը: Հիշում եմ՝ այն ժամանակ մեր ընտանիքում հակասական մտքեր էին հնչում հարուցիչի վերաբերյալ: Ամեն ինչ այնքան մռայլ էր թվում, որ սկսեցի ուսումնասիրել հիվանդությունը դեռ դեռահասության տարիքում: Գրքերից ոչ մի տեղեկատվություն չկարողացա հայթայթել ու դիմեցի համացանցի օգնությանը: Երբ ամեն ինչ արդեն պարզ էր այն մասին, թե ինչ է ՄԻԱՎ-ը, ինչպես է այն փոխանցվում ու ինչ հետևանքներ կարող է ունենալ այն չկանխելու դեպքում, սկսեցի դրա մասին իրազեկել լայն շրջանակների: Այսօր, երբ աշխատում եմ ՄԻԱՎ- կանխարգելման ծրագրով, ամեն օր զրուցում եմ մեկ տասնյակից ավելի մարդկանց հետ, ովքեր տեղյակ են հարուցիչի վերաբերյալ ու պատրաստակամություն են դրսևորում հետազոտվել, շատերին էլ ես եմ իրազեկում հիվանդության վերաբերյալ:

Իսկապես, ՄԻԱՎ-ի վերաբերյալ կարծիք ունենալը ու ՄԻԱՎ-ով ապրող մարդու հետ զրուցելը օգնում են հասկանալ, որ այն դատավճիռ չէ, ու մեզանից յուրաքանչյուրն էլ այն կանխելու հնարավորություն ունի:

Քաղցկեղով կամ գրիպով հիվանդ մարդուն խորթ աչքով չեք նայում, չէ՞: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ մեզնից մեկն են: Տարիներ առաջ, երբ նկատեցի խտրական վերաբերմունք ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ, հասկացա, որ պետք է ու պարտադիր է դրա դեմ պայքարելը:

Ես վստահ եմ՝ մի օր անպայման բոլոր մարդիկ կխոսեն, չեն թաքնվի, չեն խուսափի մամուլի հետ շփվելուց, իրենց անունը կամ տարիքը ասելուց: Հիմա հասարակության վատ վերաբերմունքը ճնշում է, կոտրում ՄԻԱՎ-ով ապրողների երազանքները:

Հենց ՄԻԱՎ-ը կանխելու համար էլ արդեն մի քանի տարի է, ինչ աշխատում եմ ծրագրում, որը իրականացնում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ում:

2013 թվականից մինչև օրս մասնակցում եմ ՄԻԱՎ/ՁԻԱՀ խնդրին նվիրված տարբեր միջոցառումների, որոնք անցկացվում են թե՛ սեմինարների տեսքով, թե՛ ակումբային տարբերակով, և թե՛ զոհերի հիշատակին նվիրված բացօթյա մոմավառություններ կազմակերպելով: ՁԻԱՀ-ի դեմ պայքարելը մեր բոլորի պարտքն է»:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ ԲԽՈՒՄ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԲՆՈՒՅԹԻՑ. «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

Ինչ էլ որ դու անես կյանքում, կլինի աննշան, բայց չափազանց կարևոր՝ անելու համար: Մահաթմա Գանդի

Գիտականորեն ապացուցված է, որ բարեգործության շարժառիթները բխում են մարդու բնույթից ու հասարակական արժեքներից, բացի բարերարների նպատակների իրագործումից՝ բարեգործությունը պետք է բխի նաև շահառուների շահերից:

Բարեգործությունը կարող է լինել ինչպես բարեփոխումների իրականացման հզոր գործիք՝ համապատասխան կոորդինացման և ընկալումների համակարգի ձևավորման պարագայում, այնպես էլ՝ սոցիալական կախվածության, անաշխատունակության և աղքատի հոգեբանության ձևավորման պատճառ:

«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը հավատրիմ մնալով իր առաքելության իրականացնում է ծարագրեր, որոնք մինչև հիմա չեն լուսաբանվել:

Հաշվի առնելով մեր գործունեության լայն շերտերը, այսուհետև մեր ընթերցողներին կտրամադրենք բարոգործական ծրագրերի ու մարդասիրական գործունեության վերաբերյալ օնլայն հաշվետվություն:

Կազմակերպությունը երկար տարիներ, բարեգործական տարբեր ծրագրերի միջոցով անապահով ընտանիքներին տրամադրել է հագուստ և սնունդ: Հավատարիմ մնալով որդեգրված քաղաքականությանը, արդեն մի քանի ամիս է Լոռու մարզի անապահով 2 ընտանիք ամեն օր կազմակերպության նախաձեռնության միջոցով ստանում է առաջին անհրաժեշտության սնունդ: Դժվարին սոցիալական իրավիճակում հայտնված ընտանիքներին տեսակցելու էի գնացել անձամբ կազմակերպության նախագահը: Սեգեյ Գաբրիելյանը, որպես օժանդակություն իր հետ տարել էր առաջին անհրաժեշտության մթերքներով պարենային փաթեթներ:

ՍԵՄԻՆԱՐ-ՎԱՐԺԱՆՔ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ

2016 թվականի սեպտեմբերի 09-ին Վանաձորում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացրեց մեկօրյա սեմինար-վարժանք «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը» և «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» թեմաներով:

Սեմինար-վարժանքի ընթացքում մասնակիցները ծանոթացան ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերին, աշխարհում և ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի համաճարակային իրավիճակին, ՄԻԱՎ վարակի ախտորոշման, բուժման, կանխարգելման հիմնական մոտեցումներին և սկզբունքներին: Սեմինար-վարժանքի ընթացքում առանձնահատուկ շեշտադրվեց ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվությունն ու հետազոտությունը:

«Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» թեմաներով դասընթացի ժամանկ էլ մասնակիցները ծանոթացան ՄԻԱՎ-ի դեմ պայքարում մարդու իրավունքների պաշտպանության արտացոլումը ոչ թե վերացական, այլև իրական, գործնական, հիմնավորված մոտեցումներին: Սեմինար-վարժանքն անցկացվեց խմբային աշխատանքների և խմբային քննարկումների, մտքերի փոխանակման, հարց ու պատասխանների ձևով:

Հշեցնենք, որ Սեմինար–վարժանքն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ կողմից ի աջակցություն «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրին, որը ֆինանսավորվում է «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ՍԵՄԻՆԱՐ-ՎԱՐԺԱՆՔ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը մեծապես կարևորում է կրթական ցանցի ընդլայնման հեռանկարը՝ ձևավորելով միջմշակութային հաղորդակցության շրջանակներ: Կազմակերպությունը Հայաստանում միակն է, որն իրականացնում է «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագիրը:
Յուրաքանչյուր տարի կազմակերպությունը իրականացնում է սեմինար/դասընթացներ, որի միջոցով բարձրացնում է ծրագրից օգտվող շահառուների կրվածության մակարդակը սեռական դաստիարակության վերաբերյալ:
Ծրագրի ուղղակի շահառուները մասնակցում են այս դասընթացներին մեծ ակտիվությամբ: Հաճախումների արդյունքում նրանք ձեռք են բերում գիտելիքներ առողջ ապրելակերպ վարելու և իրավական ոլորտի վերաբերյալ:
Սեմինար-վարժանքի ընթացքում կազմակերպության նախագահ՝Սերգեյ Գաբրիելյանը մասնակիցներին ծանոթացրեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերին, աշխարհում և ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի համաճարակային իրավիճակին, ՄԻԱՎ վարակի ախտորոշման, բուժման, կանխարգելման հիմնական մոտեցումներին և սկզբունքներին: Սեմինար-վարժանքի ընթացքում առանձնահատուկ շեշտադրվեց ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվությունն ու հետազոտությունը:

ՍԵՄԻՆԱՐ-ՎԱՐԺԱՆՔ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Վերջին տարիներին Երեւանում եւ շատ շրջաններում տարբեր միջոցառումներ են կազմակերպվում ՄԻԱՎ-ի եւ դրա կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ տարածելու նպատակով: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, որպես առաջատար կազմակերպություն, որը աշխատում է այն տղամարդկանց հետ, ովքեր սեռական հարաբերություն են ունեցել տղամարդկանց հետ կազմակերպել էր մեկօրյա սեմինար-վարժանք «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը» և «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» թեմաներով:

Դասընթացի նպատակն է շահառուների տեղեկատվության մակարդակից բարձրացման միջոցով հասարակության լայն շերտերին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության կարեւորության մասին տեղեկացումն ու ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու քաջալերումն է, ինչպես նաեւ հետազոտության հետ կապված հասարակության մեջ առկա կարծրատիպերի փոփոխումը:

Սեմինար դասընթացի մասնակիցներից մեկը խոսելով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կարևորության մասին Նշեց, որ «Յուրաքանչյուր մարդ պետք է մտածի ու հոգ տանի իր առողջության մասին, պետք է պահպանի անվտանգության բոլոր կանոնները: ՄԻԱՎ-ն ունի պատուհանի շրջան. սա այն շրջանն է, երբ օրգանիզմում արտադրված հակամարմինների քանակը բավարար չէ լաբորատոր հետազոտությամբ հայտնաբերելու համար և տևում երեքից վեց ամիս: Սա վտանգավոր է, քանի այս ժամանակահատվածում հիվանդությունը կարող է տարածվել: Հետևապես կարևոր է ճիշտ գնահատել սեփական վարքագիծը ու ռիսկային վարքագիծ ունենալուց միջինում երեք ամիս հետո հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ»:

Հշեցնենք, որ Սեմինար–վարժանքն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ կողմից ի աջակցություն «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրին, որը ֆինանսավորվում է «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ. ՍԵՄԻՆԱՐ-ԴԱՍԸՆԹԱՑ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն մեծապես կարևորում է կազմակերպության շահառուների իրավագիտակցության մակարդակի բարձրացումը, այդ իսկ նպատակով ամեն տարի իրականացնում է դասընթացներ, որոնց ընթացքում կազմակերպության իրավաբանը ներկայացնում է մարդու հիմնարար իրավունքները և դրանց իրացումը:

Այս անգամ սեմինար-դասընթացը առանձնացավ նրանով, որ շահառուներին բացի «ՄԻԱՎ-ը և մարդու իրավունքները» թեմայից ներկայացվեց նաև «Անձի իրավական կարգավիճակը իրավապահ մարմիններում» թեման: Այս հատվածում շահառուները ծանոթացան այն խախտումներին, որոնք իրականացնում են իրավապահ մարմինները, տեսական գիտելիքներ

ստացան ոստիկանության հետ շփման նրբությունների ու քաղաքացիների իրավունքների խախտումների դեպքերի վերաբերյալ: Սեմինար-վարժանքն անցկացվեց խմբային աշխատանքների, խմբային քննարկումների, մտքերի փոխանակման, հարց ու պատասխանների միջոցով:

Հիշեցնենք, որ կազմակերպությունը Հայաստանում միակն է, որն իրականացնում է «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագիրը:

Յուրաքանչյուր տարի կազմակերպությունը իրականացնում է սեմինարներ և դասընթացներ, որոնց միջոցով բարձրացնում է ծրագրից օգտվող շահառուների կրթածության մակարդակը սեռական դաստիարակության ու իրավական ոլորտի վերաբերյալ ի աջակցություն Ծիրակի ու Լոռու մարզերում և Երևանում ՏՍՏ-ների ժրջանում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ կանխարգելմանը և տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:

Ծրագիրը ֆինանսավորվում է «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի միջոցով ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ. ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՔԿՀ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Պետական ու հանրային ինստիտուտների գործունեության առանցքը մարդու իրավունքների երաշխավորումն է: Քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից ելնելով, իրավապաշտպանները հավաքվել են քննարկելու ամենահրատապ թեմանը: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միասնական պայքարի միջոցով էլ իրավապաշտպանները ցանկանում են հասնել արդարության: Նրանք նպատակաուղղված և համակարգված քաղաքականության միջոցով ցանկանում են աշխատանքներում ներդնել այն կարևորագույն գործիքները, որոնք օգտագործվում են արդի ժողովրդավարական պետությունների կողմից:

Իրավապաշտպանների օրակարգային առաջին թեման խոշտանգումների միջազգային չափորոշիչներն են. խոշտանգումների բացարձակ արգելքը սահմանված է միջազգային գրեթե բոլոր իրավական համակարգերում:

Խոշտանգումները քրեակատարողական հիմնարկներում հասարակության, քաղաքական ու պետական մարմինների կողմից հրապարակայնորեն դատապարտվում են, սակայն շարունակվում են գաղտնաբար կիրառվել:

Նախադեպերի միջոցով իրավապաշտպանները ուսումնասիրում են մարդկության համար կարևորագույն խնդիրներից մեկը: Հենց դրա շնորհիվ էլ նրանք կարողանում են պայքարել այն մարդկանց իրավունքների համար, ովքեր հաճախակի են ենթարկվում խոշտանգումների: Միջազգային բանտային կանոնների ուսումնասիրության միջոցով էլ հնարավորություն են ունենում քրեակատարողական հիմնարկներում վերահսկողություն իրականացնելու ժամանակ լինել առավել ուշադիր այն մանրուքների նկատմամբ, որոնք հետագայում կարող են իրականացված խոշտանգման ապացույցների հիմքեր ծառայել:

2-օրյա սեմինարի ժամանակ իրավապաշտպանները վերհիշեցին նաև ներպետական նորմերը՝ կատարելով համապատասխան հետևություններ:

Օրվա ավարտին մասնակիցները գործնական աշխատանքով ամփոփեցին ստացված գիտելիքները: Իրավապաշտպան կառույցների կարողությունների զարգացումը

կազմակերպվել է «Աջակցել քրեական արդարադատության և քրեական հիմնարկների բարեփոխումներին» ծրագրի շրջանակում «Մարդու իրավունքների պաշտպանությունը քրեակատարողական հիմնարկներում» թեմայով դասընթացի ժամանակ:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից քննարկմանը մասնակցել են Սերգեյ Գաբրիելյանը, Արման Սահակյանը և Արթուր Մակարյանը: Մարդու իրավունքները համընդհանուր են և անբաժանելի, դրանք փոխպայմանավորված են ու փոխկապակցված, խարսխված են իրավահավասարության և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների վրա: Մարդու իրավունքները սոցիալական արժեք են, և յուրաքանչյուրն իրավազոր է պահանջելու պետությունից՝ ապահովելու և պաշտպանելու իր իրավունքները:

ԼԳԲՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն մշտապես կարևորելով կրթությունը, այս անգամ կազմակերպել է կարիքների գնահատում ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների համար: Կարիքների գնահատման ժամանակ կազմակերպության ներկայացուցիչները Հավաքագրեցին տվյալներ, առաջնահերթություն տալով ԼԳԲՏԻ-SUS անձանց կարիքներին: Մասնակիցները ստացան համայնքների գնահատման գիտելիքներ, այդ թվում կարիքների գնահատման սահմանումն ու նպատակները, կարգը, ծավալը, մեթոդները, հաճախորդների կարիքների գնահատման գործիքները:«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը մասնակիցներին փոխանցեց գիտելիքներ ԼԳԲՏԻ ծառայությունների պլանավորման, համայնքում սպասարկման մասին:Դասընթացը բաղկացած էր երկու բլոկներից `տեսական և գործնական: Տեսական մասն Կազմակերպության նախագահը ներկայացրեց, կարիքների գնահատման կարևորությունը և մեթոդաբանությունը: Գործնական բլոկը հիմնված էր խմբային գործունեության, խմբիային աշխատանքի ներկայացման և քննարկումների վրա:Հետազոտության արդյունքները թույլ կտան որպեսզի ՆՍՀԿ-ն իրականցնի այնպիսի ծրագրեր եւ միջոցառումներ որոնք ուղղված կլինեն ԼԳԲՏԻ-SUS անձանց հիմնախնդիրների կարգավորմանը: Գնահատման ընթացքում կազմակերպությունը փորձեց հասկանալ արդյոք հասանելի են ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրը եւ միջոցառումները, որոնք ուղված են ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչներին:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ն ԴԱՐՁԵԼ Է ԻԼԳԱ ԵՎՐՈՊԱ ՑԱՆՑԻ ԱՆԴԱՄ



Ուրախ ենք տեղեկացնել, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը դարձել է ԻԼԳԱ Եվրոպա ցանցի անդամ: Կազմակերպությունը երկար տարիներ իրականացնում է այնպիսի ծրագրեր, որոնք միտված են պաշտպանելու ԼԳԲՏԻ անձանց իրավունքները: ԻԼԳԱ-ն ստեղծվել է 1978թին, այն 110 երկրների 1100 անդամ կազմակերպությունների ֆեդերացիա է, որը պայքարում է լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս և ինտերսեքս անձանց իրավունքների համար: ԻԼԳԱ-Եվրոպան պաշտպանում և ներկայացնում է ԼԳԲՏԻ անձանց իրավունքները և խնդիրները այնպիսի եվրոպական կազմակերպություններում, ինչպիսք են Եվրոպական Միությունը (ԵՄ), Եվրոպայի Խորհուրդը (ԵԽ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ):

ԼԳԲՏԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՄՆԱԼ ԱՐԴԻԱԿԱՆ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԼԲԵՐՏԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԴԱՍԱԽՈՍ ՍԵՎԱՆ ԲԵՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գործունեությանը ծանոթանալու էր եկել Կանադայի Ալբերտա համալսարանի քաղաքագիտության ամբիոնի դասախոս Սևան Բեուկյանը:

«Նոր Սերունդ»-ի աշխատակիցները ներկայացրեցին Քրեակատարողական հիմնարկներում առկա խտրականությունը, ԼԳԲՏ+ համայնքի խնդիրները ու այն ծրագրերը, որոնք իրականացնում է կազմակերպությունը: Անդրադարձ կատարվեց Հայաստանում առկա խտրականությանը ու դրա հետևանքներին: Կանադայի Ալբերտա համալսարանի քաղաքագիտության ամբիոնի դասախոսը, կարևորելով նմանատիպ հանդիպումները, ներկայացրեց նաև սփյուռքում տիրող իրավիճակը: Կազմակերպության աշխատակիցները ներկայացրեցին տրանսգենդեր անձանց խնդիրները Հայաստանում, ինչպես նաև անդրադարձ կատարվեց տրամադրվող օժանդակությանը: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Արթուր Մակարյանը ներկայացրեց այն խնդիրները, որոնց հիմնականում առնչվում են ԼԳԲՏ+ անձիք պարտադիր զինվորական ծառայության անցնելիս: Արթուր Մակարյանը շեշտեց, որ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ դրսևորվում է խտրական վերաբերմունք, ինչն էլ հանգեցնում է նրան, որ ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչները խուսափում են ծառայությունից, քանի-որ զորամասերում հավանականությունը մեծ է, որ տվյալ անձանց նկատմամաբ կդրսևորվի բռնություն: Կազմակերպության կողմից իրականացվող «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի համակարգող Նարե Հովհանիսյանն էլ, ներկայացնելով ծրագիրը, առանձնացրեց այն խնդիրները, որոնց առնչվում է դասընթացներ կազմակերպելիս, մասնավորապես շեշտեց այն փաստը, որ մարզային դասընթացների ժամանակ հաճախ բնակիչների կողմից ստանում են սպառնալիքներ:«ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի աշխատակից Գիրգոր Գևորգյանը ներկայացրեց շահառուների հետ շփման ու նրանց հայտնաբերման առանձնահատկությունները ու նրբությունները: Սևան Բեուկյանը կարևորեց կազմակերպության կողմից տարվող աշխատանքներն ու ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության մոտեցումները և հույս հայտնեց, որ շուտով Հայաստանն էլ կխոսի հավասարության և խտրականության բացառման մասին:Կազմակերպության Երևանի գրասենյակի ղեկավար Արման Սահակյանն էլ Կանադայի Ալբերտա համալսարանի քաղաքագիտության ամբիոնի դասախոս Սևան Բեուկյանին ներկայացրեց առաջիկայում իրականացվելիք ծրագրերը ու քննարկեց հետագա գործակցության ուղիները:

ԼԳԲՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում անցկացվել է ԼԳԲՏ 9-րդ միջազգային կոնֆերանսը, որին մասնակցել են տարածաշրջանում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն ու իրավապաշտպանները: Հայաստանի Հանրապետությունից կոնֆերանսին մասնակցել է «Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության նախագահ, իրավապաշտպան Սերգեյ Գաբրիելյանը:
Վերջինս ներկայացրել է Հայաստանում տիրող իրավիճակը ու այն խնդիրները, որոնց հիմնականում առընչվում են ոչ միայն ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները, այլև համայնքի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններն ու իրավապաշտպանները:
«Բավականին արդյունավետ կոնֆերանս էր, լավ հնարավորություն էր՝ մեր երկրի իրավիճակը ներկայացնելու և այլ երկրներից տեղեկատվություն ստանալու համար»,- նշում է Սերգեյ Գաբրիելյանը:
Առաջին օրը կոնֆերանսի մասնակիցների ուշադրությունը կենտրոնացած է եղել այն խնդիրների վրա, որոնք առկա են ԼԳԲՏ համայնքում: Խնդիրներից մեկն է՝ հասարակությունում վերացնել խտրականությունը և ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների համար ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նրանք կկարողանան լիարժեքորեն իրացնել իրենց իրավունքները և ակտիվորեն մասնակցել հանրային կյանքին: Տարբեր երկրների ներկայացուցիչները առաջին օրվա վերջում ներկայացրել են իրենց առաջարկությունները, հասարակություն-ԼԳԲՏ համայնք համագործակցության վերաբերյալ՝ հաշվի առնելով տեղային առանձնահատկությունները: Կոնֆերանսի 2-րդ օրը մասնակիցների ուշադրության կենրոնում է եղել ԼԳԲՏ համայնքի շահերի պաշտպանությունը և իրավունքների ոտնահարման բացառումը:
ԼԳԲՏ կոնֆերանսին քննարկվել է նաև հանրային միջոցառումների անհրաժեշտությունը և հասարակության լայն շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացման հարցերը:
ՄԻԱՎ-ի կանխարգելման ու ծառայությունների տրամադրման շարունակականությունը քննարկվել է կոնֆերանսի 3-րդ օրը: Անդրադարձ է կատարվել նաև մատուցվող ծառայությունների անհրաժեշտությանը ու դրանց որակական առանձնահատկություններին: Կոնֆերանսի ավարտին մասնակիցները քննարկել են հնարավոր համագործակցության տարբերակները: